



ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



(Ա. ՏԱՐԻ)

15 ՅՈՒՆԻՍ 1900

(ԹԻԻ 7)



ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հին երգը, Երուանդ Սրմաբեշխանյան. — Հայ որբերը եւ Անարօլ Ֆըրանս. — Էդմանը (+եբ--), Գամեր-Սըջաւիր. — Գիթական արձագանգ (հաները). Յ. Ս. փոփոզեան. — Հայերը առուեսահանդէսին մէջ. Աղախ. — Գասխարակուրիւնը թէ արուեստ, Ի. Ն. — Ճակատագրական, Ե. Ս. — Բարիգի մասուօրը, Երուանդ փեշխանյան. — Կիսամահակ:



ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՂՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

ՊՊ Շ Ա Ի Ի Ղ ՊՊ

Կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք :
Արտասահմանի » տարեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք :
Ամերիկայի » » 2 1/2 տոլար

“ Շ Ա Ի Ի Ղ ” ձեռքէ չի ծախուիր :

Երկու հասցէ միայնգամայն ունենալէ առաջ եկած խառնաշփոթութեան վերջ մը դնելու նպատակաւ որոշուեցաւ միայն թերթիս խմբագրութեան հասցէն ընդունիլ այսուհետեւ որուն պէտք է ուղղուին բաժնեգին, նամակ, յօդուած, լրագիր և գիրք :

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

(Bulgarie)

VARNA

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

Շարիդի մէջ յայտարարուելու համար խրկուած հրատարակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան :

Շ Ա Ի Ի Ղ

ՀԱՆԳԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

15 ՅՈՒՆԻՍ 1900

Թիւ 7

ՀԻՆ ԵՐԳԸ



րգեր կան որ շուտ կը հիննան, իրենց կազմութիւնն ու եղանակը անշշան ըլլալով. բայց կան ալ որ դարերով կ'ապրին, որովհետեւ անոնց մէջ ժողովրդոց հոգին կը թնդայ: Մենք ունեցած ենք այս երկու տեսակ երգէն ալ. շուտ մոռցուածներ կան, ու յարատեւութեն յեղուածներ: Բայց եթէ ունինք երգ մը որ անյիշատակ տատեններէ ի վեր կ'երգուի, չի հիննար, միշտ թարմ է ու միշտ նոր, ապահովապէս համերայնութեան այն քարոզն է զոր դարերը իրարու կը յանձնեն, սերունդները խնամքով իրարու կը փոխանցեն, և որ հիմա եկած հասած է մինչեւ օտ մեր երանելի օրերը, առանց ունէ փոփոխութիւն կրած ըլլալու իր կազմութեանը և իր եղանակաորմանը մէջ:

« Համերայն ըլլանք » ի միօրինա-

կօրէն ձանձրացուցիչ քարոզը արտուր յանկերգն է որ միշտ պիտի թնդայ մեր ականջին տակ, ու մենք պիտի շարունակենք սկեպտորէն լսել զայն առանց բնաւ անկից ազդուելու. պիտի թողունք որ այդ քարոզին թաղծոտ եղանակը մեր յաջորդ սերունդներուն անցնի, որոնք անկասկածօրէն նոյնքան խղճամիտ անտարբերութեամբ պիտի ունկնդրեն անոր ու իրենց կարգին այդ առանդը պիտի յանձնեն իրենցմէ ետքիններուն: Ու այսպէս անվերջանալի կերպով:

« Մենհամերայնութեան ոգին է որ կործանած է մեզի ». « անկարելի է որ վիճակի բարւոքում մը ունենանք մինչեւ որ համերայնութիւնը արմատ չձգէ մեր մէջ ». նրամանօրինակ համաարիպ խօսքերու սրչափ անգամներ հանդիպած եմ ազգային հանդէսներու միջոցին, լրագրութեան մէջ, եկեղեցին, ամենուրեք ուր ձայն մը դատուած է այդ դարաւոր յանկերգին անխոնջ արձագանգն ըլլալու:

Եւ արդարեւ ամէն անգամ որ աչքս
 ժուռ ածեմ մեր ազգային պատ-
 մութեան վրայ, սասկումով կը զի-
 աեմ հոն անհամերաշխութեան ոգին
 որ չար ոգիի մը պէս, այսահար
 խորշակի մը պէս պտրտած ու վա-
 զած է ցեղի մը երկու երեք հազար
 տարուան կեանքին վրայ, աւերներ
 սիւսերով, անհուն ու մահաբեր
 սենդի մը գալարումներուն մէջ
 չարչրկելով զայն ու վերջապէս ու-
 գեցապառ քայքայելով:

Այսօր, քիչ շատ խորհող ամէն
 հայ կրնայ անվրէպ կերպով մտաւր
 դնել այն խորափոր վէրքերուն վը-
 րայ զորս անմխարանութիւնը բացած
 է մեր ազգային էութեան մէջ. ոչ
 որ չի կրնար չընդունիլ թէ մեր
 անկումին իսկական շարժառիթը ա-
 նիկա եղած է, ու անիկա պիտի
 շարունակէ ըլլալ մեր ապերջանկու-
 թեան, ձախողութեանց բուն պատ-
 ճառը, հակառակ թափուած գեր-
 մարդկային ճիգերու, կատարուած
 անսահման զոհողութիւններու և
 անհատական սքանչելի սխալգոր-
 ծութեանց, որոնք ազգի մը բարս-
 յական բարձրութեան, աննկուն
 կամքին, կռուելու պայքարելու
 վսեմ ոգիին պերճախօս յայտարար-
 ներն ըլլալով հանդերձ երբեք, սա-
 կայն, չեն կրնար — և մենք դուռն
 փորձառութեամբ գիտենք ասիկա —
 ազգի մը ամբողջական վերականգ-
 նումին ստատրել, երբոր կը պակսի
 գերազոյն տաքրինութիւնը, — հա-
 մերաշխալ թիւնը:

*
* *

Հարկ կայ, սակայն, երթալ
 մեր հին պատմութեան տխուր էջե-
 րուն մէջ գեղերիլ՝ մեր ասհմային
 աղէտաւոր այս թերութեան վրայ
 գալափար կազմելու կամ անոր թու-
 զած աղէտները շոյախելու համար,
 երբ արդէն մեր մտքը, մեր շուրջը,
 ուր որ երթանք, ուր որ նեւանք
 աչաւնիս՝ պիտի տեսնենք այլան-
 զակ ու բուռականը այդ շարաշուք
 ոգիին որ կը ցնցէ մեզ, կը խոր-
 աակէ մեր հոնքային կեանքը:

Գիտեցէք արտասահմանը և ամե-
 նէն հետարքբրաշարժ տեսարաննե-
 րէն մէկը պարզուած պիտի տեսնէք
 հոն: Պատերազմի դաշտ մըն է ան,
 ուր յիսուն վաթսուն հազար հա-
 յեր բունակած են անջտա անջտա,
 փոքր խմբումներով: Անոնք իրենց
 շարժումներուն բացարձակ տէրն են.
 կրնան՝ ցանուցիւր ջակասներն իրար
 միացնելով՝ յարգարել խիտ կտր-
 դելով բանակ մը, որուն միահա-
 մուռ յառաջխաղացութիւնը, վար-
 պեա ռազմավարութեամբ մը, ար-
 դելքներ պիտի կոխէ անցնի, զըժ-
 ուարտ թիւններ պիտի անհետացնէ:
 Այդ բանակը մէկ շունչով մը պիտի
 հեւայ, մէկ մարդու պէս պիտի
 քուլէ, պիտի վաղէ, սասնու, խու-
 յանայ, յարձակի. անոր բուն
 ընդհանրումին բան մը չպիտի գի-
 մանայ. թշնամիին բոլոր մեքենայու-
 թիւնները պիտի փշուրին այդ ան-
 գիմող բելի ուժին առջեւ: Գաղա-

փարի , զգացումի և նպատակի հա-
մերաշխութեան պողպատեայ կռա-
ձոյլ անուր մը մէկ զանգուածի
պիտի վերածէ այդ բանակը , որ
երբեք չպիտի քայքայուի , ցրուի ու
փճանայ :

Սակայն , արտասահմանի մեծա-
ծաւալ դաշտին վրայ ցանուած հա-
յութիւնը կրնայ բաղդատուիլ մեր
երեւակայած բանակին հետ : Ճըշ-
մարտութենէ շեղած չըլլալու հա-
մար զտնիկա պիտի նմանցունեմ
քայքայուած բանակի մը , որուն
իւրաքանչիւր ջոկատը , նոյն իսկ
իւրաքանչիւր զինուորը իր առան-
ձին ուղղութիւնը ունի , իր ուրոյն
ծրագիրը ունի հասարակաց թըշ-
նամիին դէմ մարտուելու համար :
Գաղափարի այս գունագեղ այլազա-
նութիւնը որիչ չարիքներ ու աղէտ-
ներ քոչած բերած է իր ետեւէն .
կոխ , յարձակում , ատելութիւն ,
խառնաշփոթութիւն մը քառասյին ,
որուն մէջ անհնար է զանազանել
աղէկը գէշէն , անկեղծը կեղծա-
ւորէն , նենգաւորը՝ բարեմիտէն :
Այս տարօրինակ ու եզական բա-
նակեաղին վրայ աղմուկ մը կը պը-
տըտի միշտ , վայնասուն մը գրեթէ,
ճիչերու , կոծերու , հայհուհներու
փոթորկալից խառնամառնում մը որ
կրնայ աշխարհի կատարածին ար-
հաւիրքը ապ :


Ու բոլոր այս խառնաղտնճին
վրայ , ապշեցնող այս շփոթութեան
մէջ , երբեմն , ամպերու մութ յա-

տակը ճշքրտող շանթի մը պէս
վաղանցիկ , կը լուսի տխուր յան-
կերգը , դարերու խորունկէն սըլ-
վըլացող մրմունջը հեծեծագին .

« Համերայն ըլլանք » :

Ի՞նչ ծաղր :


Երուանց Մրմախէսանլեան



Հ Ա Յ Ո Ր Բ Ե Ր Ը

Ե ի

Ա Ն Ա Թ Օ Լ Ֆ Ր Ա Ն Ս



Ֆրանսացի մեծանուն գրագէտ Ա-
նաթօլ Ֆրանս , անդամ Ֆրանսական
Սկզբեմիի , Ֆրանսի յունիս 1ի հա-
մարին մէջ սքանչելի յօդուածով մը
պերճախօս ու խիզախ կոչ մը կրնէ ի
նպաստ Հայաստանի որբերուն : Հոչա-
կաւոր մատենագիրը քանի մը տողի
մէջ ամփոփելէ յետոյ 1895 ի կոտո-
րածները , հետեւեալը կը գրէ .

Չարհուրելի գէպքերը զրտ կը
յիշեմ , հաստատուած են հաւաքա-
կան ծանուցագրով մը զոր վեց մեծ
աէրութեանց Պոլսոյ գեսպանները
ներկայացուցին Բ. Դրան : Ուրեմն
կրնանք զանոնք վերտալին յիշատա-
կել ժողովրդոց համաձայնութիւնը
խռովելու երկիւղը շունենալով . բան
մը զոր կրնեմ հոս , չէ թէ վրիժա-
ուութեան փափաքով , հապա սղոր-
մածական մտածմամբ մը : Դեռ
այսօր իսկ հայոց վիճակը ողբալի է :
Մեր սրտերը յուզուելու են անկից ,

և եթէ մենք թողուցինք որ հայերը խողխողաին, գէթ անոնց զուկրներուն մեր օժանդակութիւնը պանալու չէինք :

Այս որբերուն համար է որ ձայնս կը բարձրացնեմ այսօր : Իմացայ թէ հայազգի հայրենասէր Պ. Արշակ Զօպանեան, յոյժ բարձր բանաստեղծ մը, դուռը ու գործազգեղ հոգւոյ տէր, հանդէս մը կը կազմակերպէր ի նըպաստ իր դժբախտ հայրենիքին դժբախտ որբերուն : Ինձի ըսին նաեւ թէ պաշտօնի տաղանդով դերասանուհի մը, որ իր անձին ու իր սրտին մէջ ամէն շնորհներ ունի, Տիկին Ռեժան, այդ հանդէսին կը բերէր իր արուեստին գիւթութիւնը : Առանց սակից աւելին իմանալու և մէկուն խորհուրդ հարցնելու, թուղթին վրայ նետեցի ու Ֆիկառօին շրկեցի քանի մը աղաչական սողեր ի նըպաստ այս տղոց որոնց համար բողբոջական միս Սթէրլթըն բաժնէ թէ աշխարհի ամենէն քաղցր աղաքներն են, և թէ անհնարին է դիմանալ անոնց սրտաճմիրկ սեւ աչուրներուն պաղատանքին :

Ծանօթութիւնները զորս երկու երեք օրուան մէջ ձեռք բերի այս որբերուն մասին, սրոնք պատըս պարուած են նոյնքան աղքատ որբանոցներու մէջ, յատկանշական ու սրտաշարժ գծեր երեւան կը բերեն, զորս կազեմ ընթերցողին առջեւ պարզել :

« Քղիէն Խարբերդ եկան երկու

փոքր մանչեր, կը դրէ Տօքթ. Պարներմ, և խնդրեցին ինէ որ որբանոց ընդունուին : Հայր մայր չունին : Անձկանքով աչքերուս մէջ կը նային . իրենցմէ մէկը կ'ըսէ .

« — Միայն մէկ տարի որբանոցը պահէ զիս որպէս զի կարգաւ սորվիմ ու մարդ մը ըլլամ : Մինչև որ կարգաւ գրել չսորվիմ մարդ չպիտի ըլլամ : Այդ մէկ տարուան մէջ կրնամ կոշիկ նորագել ալ սորվիլ, որով տպրուստս ճարելու միջոցը պիտի ունենամ :

« Ալ տեղ չիկայ մեր որբանոցին մէջ, կաւեցնէ Տօքթ. Պարներմ : Բայց կարելի է ճամբել ասոր պէս խոսամալից փոքր էակներ : Զոնոնք նորէն թշուառութիան և մուրացկանութեան գիրկը նետելու գաղափարն իսկ առժանելի է » :

Ամերիկացի միսիոնար մը մեզ կը դրէ Խարբերդէ .

« Այս պզտիկները մարդեր են : Մեր որբերուն մէջ յաճախ կը հանդիպինք ութը ինը տարեկան մանուկներու որոնք կարծես իրենց պատասխանատուութեան առնական զգացումը ունին : Պիտի յիշեմ օրինակը փոքր մանչու մը որ շատ երջանիկ էր մեր որբանոցին մէջ և որ ինձի իմացուց թէ ալ չի կրնար մնալ :

« — Մեծ հայրս տպրեցնելու համար, բաւ, երթալ աշխատելու եմ :

« Այս փոքր մարդը ութը տարու էր :

« Միեւնոյն տարիքը ունեցող մանչեր ու աղջիկներ սրբանոց բերած են իրենց օրօրոցի եղբայրներն ու քոյրերը, զորս կը մեծցունեն մեծ խնամքով :

« Որբանոցին աղաքը քանիցս թողառու թիւն խնդրած են ճաշ չընելու, որպէս զի սովահարներ կերակրեն : Պատահած է որ ամբողջ շաբաթ մը անոնք օրուան մէջ մէկ անգամ միայն հաց ու բրինձ ուտեն, մնացածը աւելի գժբախտներու թողլով : »

Աւասիկ այն սրտաշարժ էակները որոնց համար այսօր խօսք տուած եմ :

Քրիստոնեայ Եւրոպան, Ֆրանսան զլուխ ունենալով, պարտաւոր է սնուցանել և հագուեցնել որդիներն ու աղջիկները Արեւելքի քրիստոնեաներուն որոնց բնաւ չընձեռեց և որոնք կտորուեցան՝ յամօթ իրեն : Քառասուն տարի առաջ, Մարտինները, հարստահարուած ինչպէս այսօր հայերը, իրենց ոչքերը գարձուցին գէպի պաշտպան ազգը : Լիբանանցի ծերուկ մը, զոր տիրու զի ձիաւորներ խողխողած էին իր սանը տալելու ու հոն ձգած իրրեւ մեռած, ոտքի ելաւ, կանչել տուաւ իր կրտսեր որդին և, երբ ազան իր քով եկաւ, բռնեց անոր ձեռքն ու ըսաւ անոր .

— Երեսէֆ, կուզեմ որ մեծ երգում մը տաս ինձի : Երբ Ֆրանսայի քրիստոնեաները գան օգնութեան Լիբանանի իրենց եղբայրներուն,

բուն, գերեզմաննոց պիտի վազես, պիտի ծնրագրես գերեզմանիս վըրայ և ահանջիս պիտի միմնջես այդ աւետիսը, որպէս զի ես ալ հողին տակ սարսուամ Լիբանանի հրճուանքովը :

Այս խօսքէն յետոյ, ծերունին մեռաւ : Եւ շատ չանցած, Երեսէֆ Քարամ կրցաւ երթալ ըսել իր հօր որ հողին տակ պառկած էր .


— Հայր, խաղաղութեամբ քնացիր : Հայր, հրճուանքով ննջէ : Յոյսըդ զուր չելաւ . ֆրանսացիք եկան ու մեր ժողովուրդը մտիթարուեցաւ :

Այդ ժամանակէն ի վեր, Տաւրոսի գագաթներէն մինչեւ Արարատի լեռնոց աշտերը, երեք հարիւր հազար զոհեր ինկան, որոնց զայրացած ստուերները կաղաղակեն մեզ .

— Չեկա՛ք : Մենք մեռանք ու մեր զաւակները պիտի մեռնին, որպէս զի խաղաղութեամբ քնանանք, հա՛ց առէք մեր զաւակներուն :



ԲՂՁՄԱՆՔԸ



Ա.

Աստու մը գարնան, կանուխ սակաւին,
 երբ դեռ մութն ու լուս կռիւ կ'ընէին,
 երբ դեռ ամէն ոք մեղմել քրեանար,
 Անուշիկ ձայն մը — ձայն էր թէ քնար —
 Ինձի արթնցուց : Երբ աչքս բացի
 Տեսայ լուսաւոյ դէմք մը կանացի :

ձերմակ, հեփհեփմակ հագուստ էր հագած .
 Ունէր զոյգ քեւեր ըսպիսակ ու բաց,
 Եւ նակի՞ն վրայ ասոյ մը փայլուն . . .
 — Յիշէ՛ս, ըսաւ ինձ, ինչ կրօնայիւր դուն .
 Որ քեզի մէկը սունէ ու սանի,
 Ճշտած, աւերուն մէջ Հայաստանի :

— Ո՞հ, նոյն փափաքէն երակներս կ'եռան,
 Ըսի հեփհեփի՞ն . — զի հեփհեփ էր ան —
 — Տեսնել կ'ուզէիր, յարեց ան նորէն,
 Թէ ձեր բեկամի՞ք վաս ու աճօրէն
 Ինչպէ՛ս քաւ ու քանդ, ինչպէ՛ս ամէն ինչ
 Եւ քաղաք ու զիւղ բրին բրնաչի՞նց . . .

Ու ըսկսեցի՞նք նամբորդել մէկտեղ,
 Միտք սրլանալով դէպ երկի՞նք անեղ :
 Ակնբարբի մէջ բարձրացանք յոյժ վեր .
 Աւխարհն ալ փոքրիկ մեզի կերելու .
 Մեր ոսկերուն սակ վիհրն էր մրրին,
 Խոյ մեր բոլորսի՞ք ասոյն, ծիր կաթին :

Բանի՞ք էր շրջել այս համապատկեր,
 Եւ ի՞նչ հեփհեփեամբ մեզ կը պատուէր .
 Սիւր՝ ոյր քեւերուն վրայ մեղմօրօր
 Յար կ'այցելէինք աւխարհն նորունուր . . .
 Պատկերու լեզուն, ի՞նչ նուագ անհուն
 Իրենց աչաց պէս յուզիչ, քրքրուն :

Բաղաճներ, զիւղեր, տեսիլներու պէս
 Մեր աշուրներէն կ'ըլլային անտես .
 — Ո՞ր է, հարցուցի, բայց ո՞ր մեր երկիր .
 — Պահ մ'ալ սպասէ, համբերող եղիր :
 Եւ ի՞րօք պահ մ'ալ զացի՞նք զերդ խոհանք,
 Եւ հեփհեփի ըսաւ . — անա՛ւ ալ հասանք .

Պահ մը կանգ առինք մէջ մրրնորսին .
 — Տե՛ս, ըսաւ հեփհեփի, ընդ դիտէ չորս դիմ .
 Անա՛ Սասունը, անա՛ Վանն ու ծով,
 Համակ հեփհեփեամբ կարմիր արիւնով .
 Անա՛ այս տեղն է ըզմանի՞ք կայան .
 Անա՛ Հայաստան :

Եւ տեսայ սոսկմամբ . . . լին՞ի իմ աչերուն,
 Անբիւ՛ր քաղաքներ, դէզ դէզ, աւերուն,
 Ընդարձակ դաշտեր լեւի ու ամալի,
 Անբրնակ ու լուռ լուռքեամբ շրմի .
 Շրտուկ մը միայն մերք մեզի կուգար,
 Շրտուկ մ'որ կարծես հեւք մըն էր երկար .

Ապահովապէս հեւքն էր այն հայուն,
 Հառ աչանքն յետին կեանքին պրկալուն :
 Լեռներն հսկայ, մունջ ալ պատկառոտ,
 Աւերակաց շուրջ կազմէին նարոտ :
 Վկայք էին լուռ մեծ նախնիներուն . . .
 Աչերն յարեցի աւելի հեռուն :

Ո՞հ, ինչ տեսարան . ամէն տեղն ալ նոյն .
 Գիշտակիչ քուչնոց եւ բոքսանի բոյն .
 Լալով եւ դարձայ գուարբնոյն դողահար
 Եւ նճարեցի ու ինքն ալ կուլար,
 Եւ մինչ շրմաւած աչապէս մրնայի՞նք,
 Զոյգ խուր աչեր բարձրացան երկի՞նք .

Զոյգ խուր աչեր, արցունքներու ալ,
 Ոյց մէջ ցոլային վճեռ անյասակ :
 Կին մ'էր իմարտեկ ու ձեռն ի ծնօտ
 Նստած կը հսկէր աւերակաց մօտ :
 Անբիւ՛ր խոռուններ անոր նակասին
 Խորունկ աչուներ քանդակած էին :

❦ ❦ ❦

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

❦ ❦ ❦

ՃԱՆՃԵՐԸ

Ճիշդ ժամանակն է, կարծեմ, խօսերու այս անմեղ կարծուած բայց շատ վտանգաւոր կենդանիներուն վրայ, որոնք աներեսի մը յատուկ անամաթութիւնովը ամէն ծակուծուկ անարգել կը մտնեն կելլեն, տունէ տուն այցելութեան կը պտըտին, թաղէ թաղ կը գաղթեն ու . . . երբեմն ալ կերթան կուգան յանկարծ մեր քթին ծակին մէջ կը թխմուին և կամ խմելիք սուրճերունու երեսը անփոթ, անհոգ կը լողան :

Չղուելի են անոնք . բայց ի՛նչ օգուտ . ինչպէս առանց փուշի վարդ չըլլար, այնպէս ալ առանց ճանճի ամուտ չիգար . վա՛յ անոր որ անոնցմէ ոճրագործներուն կը հանդիպի :

Տեսակով ալ բազմաթիւ են այս գարշելի արարածները, ամենքն ալ տարբեր տարբեր պաշտօններով օժտուած և բնաւորութեամբ ալ բոլովին տարօրինակ :

Վռնասուելէ չեն ամչնար, հալածուելէ չեն վախնար և սպանուելու վտանգը իրենց համար կարծես գոյութիւն չունի . քանի սճիկդ ձեռքերնուն ազատել ուզես, այնքան մօտդ կուգան . թագաւորներն անգամ հանգիստ չունին անոնց ձեռ-

քէն, ուր մնաց պարզ մահկանացուները :

Տաքերուն հետ աշխարհ կուգան և ձմեռը հասնելուն պէս կը կորսուին կերթան լայն շունչ մը առնել տալով մեզի . սակայն ի՛նչ սուկալի հեաքեր կը ձգեն ետեւնին :

Քանի՛ քանի՛ հոգիներու մահուան պատճառ եղած են այդ հազիւ կիսամեայ կեանք ունեցող բզէզները . որքան տուներ փլցուցած են, որքան թաղեր վարակած և ինչքան արցունք թափել տուած՝ անմեղ էակներու որոնք կարծած են թէ թաշկինակի մը ծայրովը զանոնք վանելը բաւական է ազատելու անոնց վնասակար յատկութենէն, — վարակելու յատկութենէն :

Ճանճերը միայն իրենց անտանելի բզզիւնովը և յամուտ արշաւանքներովը չէ որ նեղացուցիչ են, հապա ունին այնպիսի անգիտակցօրէն կատարած վաս պաշտօն մը որուն պէտք է սեղեակ ըլլայ մեր ժողովուրդը և զգուշանայ :

Վարակելու պաշտօնն է ատիկա, այսինքն ապահով միջոցը ստանալու այն կարգ մը հիւանդութիւնները որոնց անունը անգամ լսել չենք ուզեր :

Ճանճերը, ինչպէս ըսինք, ամէն ծակուծուկ կը մտնեն, մանաւանդ հոտած, ապականած տեղեր : Փրտած, նեխած առարկայի մը շուրջը դեգերիլը իրենց համար այնքան հաճելի է որքան համով կերակուրներու և անուշեղէններու շուրջը :

Մենոց ստբերը, մարմնոյն զանազան մասերը հպելով մանրէներով լեցուն առարկայի մը — թուք, կղկղղանք, փոսած դիակ, աղոտղու թիւն և այլն — կառնեն կը վերցնեն մաս մը այդ մանրագիտական ճճիւներէն և կը փոխադրեն մաքուր տեղեր, առողջ մարմնոյ վրայ, թարմ կերակուրներուն մէջ և հոն ձգելով անոնցմէ մէկ քանին, կանցնին կերթան մնացածն ալ ուրիշ տեղեր թօթափելու :

Մանրէաբանութիւնը այսօր հոտատատած է որ ճանճերը շատ անվնաս դեր մը չունին հիւանդութիւններու տարածման մէջ և անոնցմէ առաջ եկած վտանգները երեւակայական չեն երբեք :

Բաւական է գնել ճանճ մը քիչ մը ժէշաքիկէ մակերեւոյթի վրայ որուն հպին անոր ստբերը և ահա քանի մը ժամէն մանրագիտակը ցոյց պիտի տայ սճած, զարգացած գաղթականութիւն մը զանազան միքրոպներու՝ որոնք մէյմէկ մահացու հիւանդութիւններու սերմեր են :

Ճանճերը, չգիտցուիր ինչո՞ւ, մասնաւոր հակում մը ունին թուքերու շուրջը պտրտելու, շատ կը սիրեն կղկղանքները և ասի այնպիսի ճաշակ մըն է որուն գէմ կարելի չէ մաքառիլ, քանի որ ճաշակը անվիճեցի է, կըսեն. բայց երեւակայեցէք աղէտին մեծութիւնը եթէ այդ թուքերը ելած ըլլան թոքախտաւորներու բերնէն և կամ այն

կղկղանքները ժանտախտաւորներու վերաբերին :

Տօքթ. Հանքին կըսէ թէ ճանճէ վարակումը անխուսափելի է համաճարակներու միջոցին և ասի անձնական փորձով ալ կը հաստատէ. Հնդկաստանի ժանտախտին ժամանակ բանտի մը մէջ գաւաթ մը կաթ ձգելով՝ 24 ժամ յետոյ անսած է որ կաթին մէջ ժանտախտի միքրոպները կը վխտան խղղուած ճանճերու քովիկը :

Ժանտախտի մանրէն թէև սովորական գոյութիւն չունի ժողովուրդներու մէջ, սակայն միշտ կան թոքախտի և ժանտախտի միքրոպները որոնք ճանճերու կողմանէ ճանչցուելու և զանազանուելու բաղդը չունին քանի որ մանրէաբանութիւնը մուտ գտած չէ անոնց մէջ :

Տօքթ. Լաֆօրկ անցեալները բըժըշկական կաճառին ուսումնասիրութիւն մը ներկայացնելով կը հաղորդէ թէ ապրիլ և մայիս ամիսներուն մէջ ճանճերու շնորհիւ ծաղկախտի համաճարակ մը տարածուած ըլլալով Քօնսթանթինի մէջ, կարելի եղած է ճանճերը ջրնջելով հիւանդութեան առաջըր առնել :

Նաեւ անգլիացի բժիշկ մը՝ Մօնսըն՝ հաստատած է թէ ճանճի լայթուածքէն մանրէներ մարդու արեան մէջ կը մտնեն և ներարկումի չափ կազդեն :

Տօքթ. Լօու ևս խել մը ճանճեր

բունելով մանրադիտակի ներքեւ գրած և տեսած է որ բազմաթիւ միբրոպներ բոյն գրած են անոնց ետեւոյքին վրայ որ գիւրաշարժ է և կրնայ ամէն կողմ քսուիլ կամ դպչիլ :

Ջերմի և ճահճային տենդի հիւանդութիւններուն մանրէները որոնք բազմաթիւ են մեր կողմերը և շատ փտանգաւոր , մեծ դիւրութեամբ կանցնին ճանճերուն և անոնցմէ՝ մարդուն :


Նմանապէս ճանճերը պատճառ կըլլան որ թարմ կերակուրներ , մաքուր ջուրեր , պտուղներ , անուշեղէններ , պանիրներ քանի մը ժամուան մէջ բոյներ գառնան փառ սակար մանրէներու որոնք մեզի մահուան արհաւիրքը կուտան :

Ուրեմն զգուշանալու է ճանճերէն , արգիլելու է որ փոքրիկ տըղաքներ զուարճանան անոնցմով . վանելու կամ ջնջելու է մեր բնակութեան տեղերէն ամէն օր այդ դարչելի արարածները , որոնք արդէն անհանդուրժելի են իրենց յամառ յարձակումներովը և անդադրում բզզիւններովը :

Մնայուն և նեխած ջուրեր ունեննալու չէ բնակարաններու շուրջը , փսած և աւրուած կերակուրներ թափելու չէ մօտակայ տեղեր ու մանաւանդ պայման դրուելու է որ՝ ինչպէ՞ս Միացեալ-Նահանգներու մէջ պարտաւորիչ է՝ ժողովուրդը փողոցը չթքնէ :


Այս ամէն զգուշութիւնները բունել վերջ մարդ սահարցումը կուղղէ ինքզինքին թէ՛ ինչո՞ւ արդեօք այսքան անկայուն , անարժէք և առաւայանքին մէկ հիւլէն իսկ չարժող աշխարհքին մէջ պաշարուած ենք բազմաթիւ վտանգներով , որոնք մեր կեանքը ամէն վայրկեան կասկածի տակ կը դնեն և ազատ շունչ առնել չեն տար :

Յ. Ս. ՓԱՓԱԶԵԱՆ



Հ Ա Յ Ե Ր Ը

Մ Ի Ռ Ո Ւ Ե Ս Տ Ա Ջ Ա Ն Դ Ի Ս Ի Ն Մ Է Ջ



Բարիզի ցուցահանդէսի սերպիական բաժնին երկու սրահները ցեղաբանական թանգարանի վերածուած ըլլալով , անոր կազմակերպութիւնը յանձնուած էր հայու մը , Պրն. Իսկէնտէր որ Մալխազունիի :

Յունիս 12 ին այդ սրահներուն բացումը տեղի ունեցած է հանդիսաւորապէս . Պ . տը Մալխազունի մեծ յաջողութիւն ցոյց տուած է և արժանացած է շատ մը նշանաւոր անձերու շնորհաւորութիւններուն , ինչպէս Սերպիոյ և Բուլմանիոյ դեսպաններուն , Պուլկարիոյ գործակառարին , արուեստահանդէսի ընդհանուր գովեսէր Բիքառի և բոլոր կառավարութիւններու պատուիրակներուն , որոնք ամէնքն ալ հիացած են ցեղաբանական թանգարանի կատարելութեան վրայ :

Պ . տը Մալխազունի Իսկիւպցի փաստարանի մը որդին է . փոքր հա-

սակէն Պօլիս խրկուելով դրուած է Օրթոգրիկ Հայկական Կրթարանը, որուն 1888 ի յաջող շրջանաւարտը եղած է:

Վարժարանը ձգելէն յետոյ գացած է իր ծննդավայրը, ուր նախ քարտուղարի եւ յետոյ թարգմանի պաշտօն վարած է աւստրիական հիւպատոսարանին մէջ ամբողջ 7 տարիներ, որոց միջոցին պատուանշաններ ստացած է Ֆրանց-Եօղէֆ կայսրէն, Պապէն եւ Օսմ. կառավարութեանէն, ինչպէս նաեւ Պապին կողմանէ ազնուական քրտիտոսը: 1894ին Պ. տը Մալխազունի փափաքելով Պօլիս փոխադրուել՝ մերժուած է հայ ըլլալուն համար. ուստի ձգած է իր պաշտօնը հակառակ աւստրիական կառավարութեան եւ հիւպատոսին ստիպումներուն ու 1895 ին Բարիզ անցնելով հիմնած է հոն **La France à l'étranger** անուն ֆրանսերէն հանդէս մը որուն հրատարակութիւնը կարճ տևած է. յետոյ թղթակից ընդունուելով Բարիզէն՝ էլէնը, Լ. Ֆրանս, Նոս, Իլլէսթրացիոն եւ Լոնտոնէն՝ Լընդընի-ը ու Կրֆիթերթերուն, թրքո-յունական պատերազմին խրկուած է, որուն չէ կրցած հասնիլ Պօլսոյ մէջ ձերբակալուելուն եւ բանտարկուելուն պատճառաւ: Պօլսոյ ֆրանսական դեսպան Գամպօնի միջամտութեամբ ազատուելէ յետոյ Բարիզ կը վերադառնայ եւ հոն կը հրատարակէ **Համալսարան** եւ **Արեւելեան Ինքիլ** խորագրով ուսումնասիրութիւն մը, որուն համար Հանթթօ եւ Մուրավիէվ կը շնորհաւորեն զինքը:

Անկից յետոյ անգամ մը միայն յիշուեցաւ իր անունը Սերպիոյ թագով պատուանշանը ընդունելուն առթիւ եւ անա այսօր արուեստահանդէսին մէջ Սերպիոյ ցեղաբանական

թանգարանին կազմակերպչի համբաւը կառնենք ֆրանսական թերթերէն:

Պ. տը Մալխազունի, 7-8 լեզուներու տեղեակ, սուր իմացականութեամբ եւ գրելու կարողութիւնով օժտուած համակրելի երիտասարդ մըն է, եռանդոտ սիրտ մը կը կրէ, անվհատ աշխատող մըն է եւ աննկուն ոգիի տէր: Հայաստանի կոտորածները իր հայրենասիրական զգացումները բորբոքելով՝ իր հրատարակած ֆրանսերէն հանդէսին մէջ կծու յօդուածներ գրած է Թուրքիոյ դէմ, ինչ որ պատճառ եղաւ Պօլսոյ մէջ իր ձերբակալմանը եւ բանտարկութեանը:

Բարիզի մէջ իր ունեցած բազմաթիւ յարաբերութիւնները եւ հասառուի դիրքը զինքը քիչ մը կասկածելիցօյց տուին, այն աստիճան որ Պ. տը Մալխազունի զգուանք մը զգալով նետուեցաւ օտար շրջանակներու մէջ, ուսկից այսօր դուրս կուգայ այնքան փայլուն կերպով:

Պ. տը Մալխազունի գրեթէ ամբողջ Եւրոպիոյ մայրաքաղաքները այցելած է. սերտած է ժողովուրդներու կեանքը, մանաւանդ սլաւ տարրին կեանքը զոր շատ մօտէն կը ճանչնայ. թափանցած է անոնց ներքին պայմաններուն եւ շատ մը տօքիւմաններ ունի իր տրամադրութեան ներքեւ զորսօր մը անշուշտ հրատարակութեան պիտի տայ:

Պրն. տը Մալխազունիի կազմակերպած թանգարանը իր ինքնաապուրթեամբ կարեւոր տեղ մը կը գրաւէ: Սլաւ տարրերուն ցուցահանդէսի կարեւոր մասն է ան. իրաւ է թէ այս տարրերը իրարմէ անջատ երկիրներու մէջ կապրին, սակայն ներքին կապով մը անքակտելի կերպով միացած են իրարու, ինչպէս ցոյց կուտան իրենց

սովորոյթները, կառավարական դրու-
թիւնները, լեզուի խնամութիւնը եւ
բարքերու նոյնութիւնը:

Ասոնց մէկ ապացոյցն է նաեւ ցե-
ղաբանական թանգարանը ուր 40 ի
մօտ մեղրամոմէ արձաններ բնական
մեծութեամբ եւ հագուած սերպիա-
կան, պօսնիական, Հէրոէքի, Մօն-
թէնէկրօի, Մակեդոնիոյ եւ Տալմա-
սիոյ ու հարաւային Աւստրիոյ սա-
րազներ՝ պատմութիւն մը կը ներկա-
յացնեն՝ իր գլխաւոր գծերուն մէջ
անվիճելի նմանութեամբ մը:

Ամբողջ դարդարանքները, առաւել
կամ նուազ հարուստ, միայն մանրա-
մասնութեանց մէջ կը տարբերին ի-
րարմէ:

Սերպիոյ կնոջ տարազը սկսեալ ա-
մենէն ազնուականէն մինչեւ յետին
գիւղացիներ, միեւնոյն ձեւը ունի.
երիզներու տարբերութիւնը կորոչէ
աստիճանը. կը բաղկանայ բաճկոնա-
կէ եւ օտլաւէ մը. մէջքին վրայ ար-
ծաթապատ եւ թանկագին քարերով
զարդարուն գօտի մը որ տեսակ մը
սեղմիրանի գեր կը կատարէ եւ իբրեւ
գլխանոց նմանապէս արծաթապատ եւ
ոսկեհուռ զգակ մը:

Էրիկ մարդու հագուուորը այնքան
ուշագրաւ չէ որքան կնոջը. ընդհան-
րապէս ձերմակ, լայն թեւերով եւ սեւ
երիզներով զարդարուն է ան, մէջքը
լայն գօտիով մը եւ գլուխը պարզ
զգակ մը, սակայն ամէնքն ալ ինք-
նատիպ: Ահա այս բաները կազմա-
կերպած ու դասաւորած է Պ. աը Մալ-
խազունի հիանալի երկայնամտու-
թեամբ եւ փորձ հմտութեամբ մը եւ
ինք առաջին հայն է որ օտար տարբի
մը շնորհները կը ցուցադրէ աշխարհի
չորս կողմերէն վազող այցելուներու:

Ա.ՋԱ.ԻՍ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԹԷ ԱՐՈՒԵՍ



Յարատեւութեան ողիին պակա-
որ, որով անջինջ դասակնիքի մը
պէս խորանսած են մեր ճակատը
դարերի ի վեր, անվիճելի ճշմար-
տութիւն մը սովոր ենք կարծել:
Սակայն ապրելու գիտակցութիւնը
ունեցած օրէս ի վեր, անցեալ եւ
ներկայ գէպքերը ուշադիր քննելով,
տարբեր համոզմուն մը եկած յան-
գած եմ. մեր ամէն գործերուն կիս-
կատար հանդամանքին պատճառը
փոխանակ յարատեւութեան թող
ողի մը մէջ վնասելու, աւելի ճիշդ
չըլլար որոնել զայն անոնց թերի
սկզբնաւորութեանը մէջ. ի՞նչպէս
կուզենք կամ կրնանք շարունակել
գործ մը երբ ամէն թափուած ճիգ
անօգուտ պիտի ըլլայ ըզձայնած
նպատակը ձեռք բերելու համար.
Ընականաբար ժամանակէ մը ետքը
պիտի ստիպուինք լքել զայն:

Ահա այս լքումն է որ հարեւան-
ցի քննութեամբ մը կը վերագրուի
յարատեւութեան ողիին չլոյսու-
թեանը: Գոնէ պահ մը խորհի՞նք
մեր լքումին պատճառներուն վրայ.
երբեք. ու, դարձեալ կը կրկնեմ,
ի՞նչպէս կարելի է նպատակի մը
հասնել, երբ սխալ շուիլ մը բըւ-
նուած է: Ուրեմն չարիքին միակ
և միակ պատճառն է սխալ կամ
ձուռ սկզբնաւորութիւն մը:

Մեր բոլոր մտածումները և գործերը, վայրկենական տպաւորութեան արդիւնք, բնական է որ վայրկենական ալ կեանք ունենան. նորին սիրահար՝ անխորհուրդ կերպով կը յարինք ամէն բաներու, որ նորին հրապոյրը կուտան մեզի. վըստանգը աննշան պիտի ըլլար, եթէ ըւրջ հարցեր զերծ մնային այս գոթախառութենէն :

* * *

Ժամանակէ մը ի վեր տաճկահայ մամուլը կըզբաղի ազլկանց դատարակութեան հարցովը. սակայն յայտնի չէ թէ յուզուած խնդիրը իսկապէս ազլկանց դատարակութեան հարցն է թէ աւելի անոնց համար նիւթական անկախ դիրք մը ձեռք բերելու ձգտումը :

Փիլիսոփայ ըլլալու հարկ չկայ հասկնալու համար սա պարզ իրողութիւնը թէ դատարակութիւնը հիմնապէս կը տարբերի նիւթական անկախութեան յաւիտենական խնդրէն :

Մինչև ցարդ գրուածներէն այնպէս կըմբռնեմ թէ աւելի կանոնց սպրեւու միջոց մը հայթայթելու փափաքն է որ կը տիրէ : Սակայն ս՞րն է մեր բաղձանքը. ընկերական կեանքի բարոքս՛ւմ թէ կանոնաց նիւթական անկախութիւնը. եթէ այս վերջինն է, ուրեմն հարցը կը դադրի դատարակութեան

չուրջը դառնալէ, և ասոր յոյժ շօշափելի տպացոյցներ են մեր արզամարդ բարեկամները, որոնց ամէնքն ալ, աննշան բացառութեամբ, ունին իրենց հացը ձարելու միջոցը, սակայն ամէնքն ալ անխտիր դատարակուած են. — թող ներեն ինձ, եթէ պատասխանս իրենց ետը դգուելու հանդամանքէն զուրկ ըլլայ : Իրաւ է թէ անոնցմէ խիստ շատեր իրենց նիւթական անկախութիւնը ձեռք բերած են, սակայն խիստ քիչերն են որ դատարակուելու պէտք չունենան : Եւ մենք աղէկ գիտենք թէ « ոչ միայն հացիւ կեցցէ մարդ . . . » :

Մենէ ս՛վ կրնայ երաշխաւորել թէ բժիշկ, փաստաբան, վաճառական և նոյն իսկ դատաւոր կիներու թիւը շատցնելով, փափաքուած նըպատակին պիտի հասնինք : Չէ՞ք կարծեր թէ մասնադէտ կանոնց յաջորդական շարքին հետ՝ բազմապատկուին նաև մեր գոթախորթեան պատճառները, եթէ կոշտական անհրաժեշտ շնորհները պակսին, զորս միայն ըւրջ դատարակութեամբ կարելի է ձեռք բերել :

Երեւակայեցէք վիճակը այն հրապարակին, ուր գործի կիներ կուգան կը նետուին իրենց կանացի մանուածապատ էնթրիկներովը զինուած — արգէն առանց իրենց ալ բաւական կուռ հիւսուած ըլլալով էնթրիկներուն ցոնցը. — գձուձ շա-

համը վաճառական կին մը՝ վաչխառուէն, ու անտիրա բժշկուհի մը դահիճէն աւելի պիտի գայթակղեցընեն զմեզ. թերեւս առարկութի կիները բարձրագոյն ուսում տաճարով կը զարգանան և բոլոր այս երթագրութիւնները յառետաւութիւն կը մնան. այս առարկութեան բաւական ջախջախիչ փաստ մը կը բերէ կուսայ մեզ զօրաւոր սեւը:

Իրոյ վիճակը կը փոխուի միայն այն ատեն, երբ մեր մասնագէտ կիները կանխաւ առողջ դատարարութեամբ օժտուած ըլլան, ինչ որ կապացուցանէ թէ արուեստ կամ գիտութիւն միշտ երկրորդական ինդիւր կը մնայ մեզ համար, ցորչափ չունենանք գերազանցապէս դատարարական կիներու ստուար լէզէն մը:

Մասնագիտութիւնը նշանակութիւն չպիտի ունենայ մինչև որ արմատէն չը ջնջուին կանացի թերութիւններ, կեղծիք, բամբասանք, նախապաշարում և մնացածները: Միշտ ապահով պիտի յառաջանանք գէպի մեր նպատակը, երբ հեռատեսութեամբ հաստատենք այն հիմերը, որոնց վրայ կուզենք բարձրացնել շէնքը: Ի՞նչ է մեր խէտուրը. իգական սեռին բարոյական մակարդակը բարձրացնել. լաւ ուրեմն, ամբիկա այն ատեն իր կոչման արժանի սեւը կը գտնէ, երբ կու-

նենայ անձնուերութիւն, վեհանձնութիւն, իր պարագրին և մանաւանդ իրաւունքին գիտակցութիւնը, մէկ խօսքով «ճշմարիտ կիներ» է որ հոգւոյ և սրտի անհաւասարի քաջութեամբ պիտի օգնէ նիւթապէս և բարոյապէս իր հօրը, եղբորը կամ ամուսնոյն: Այս հանգամանքներով օժտուած և մտքի բաւականաչափ զարգացում ունեցող կիներ անգործ չի կենար, աննպատակ կեանք մը վարելը՝ տանը չորս պատերուն մէջ փակուած, յաւիտենական դատապարտեալի մը պէս ապուշ ջերմեռանդութեամբ մը քրտահաճ ամուսնի մը սպասելը իրեն անարժան ու անարգական գիրք մը կը սեպէ:

Վերջապէս «ճշմարիտ կիներ» աշխատելու և իրեն ասպարէզ մը գանելու համար խթանի չսպասեր. եթէ իրական օգուտ մը ընել կուզենք, աւելի հոգ տանինք դատարարականութեան, լուրջ, խնամուս և առողջ դատարարական, ուսկից կը բխին ամէն բարիք՝ վճիռ քաղցրահոս գիտակի մը հանգոյն:

Ի. Ն.



ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ

Պայմաններ կան որոնք կստիպեն քեզ գոհիկ նախապաշարումներ մշակելու, ճակատագրականութեան մութ ուղիներուն վրայ խարխափելու, եւ որոնցմէ քանի խուսափել ջանաս՝ անոնք այնքան կը հետապնդեն քեզ, միտքդ, զգացումներդ կը գերեն, կը կաշկանդեն՝ դժբախտ յուսուս մը, սեւ մտածող մը դարձնելով էութիւնդ ամբողջովին:

Որքան, օրինակի համար, չուզես հաւատալ թէ մեր ազգային դժբախտութիւնը նախախնամական աղէտալի վճիռի մը նուիրագործումը չէ ստացած վերջնականապէս, այնքան աւելի դէպքերն ու դիպուածները մանաւանդ՝ կուգան այդ ախուր մտածման առաջնորդել քեզ:

Քառորդ դարէ ի վեր, հայկական դատը եւրոպական քաղաքանութեան ատենին առջեւ բերուած է, եւ դիւանական տոմարներու մէջ պաշտօնապէս արձանագրուած այս արիւնալի դատին գոյութիւնը: Գուցէ դատավարութիւն մը երբեք այսքան սիրտհատնում կերպով երկարաձգուած չըլլայ: Ու այդ գերագոյն ատենին մէջ բազմող դատաւորները — դեկավարները ինկած ժողովրդոց դառն ճակատագրին — անողոք ու սկեպտիկ համբերութեամբ կը դիտեն այս գործին ձգձգումը, քաշկոտուիլը արգարութեան սրահներուն մէջ, մինչ ուրիշ դատեր արծուօրէն կուգան կանցնին անոր վրայէն:

Քսանեւհինդ տարի՝ Ի՛նչ չարաշուք չըջան մը յապաղուած դատի, որուն սեւողութեան իւրաքանչիւր բոպէն

սպառման, քայքայման ու փճացումի ահուկի վտանգներով աւլցուած է ազգի մը կեանքին համար: Քանի քանի անգամներ այս արիւնալից դատին կատարումը այնքան վերահաս երեւցաւ, ու դէպքեր, անակնկալօրէն յառնելով, ետ մղեցին զայն, մոռացութեան մատնեցին:

Հայկական դատը դժբախտ ճակատագրականութեամբ մը դրոշմուած է: Ամէն անգամ որ քաղաքականութեան դիւլային մանուածներէն սպրդելով անցնելով՝ անիկա լուծման մը յանդէլու հաւանականութիւնը կունենայ, ահա ուրիշ խնդիր մը պատճառ կըլլայ անոր յետաձգուելուն, իբր թէ մեր խնդիրը խնդիրներուն էն յետինը եղած ըլլար եւ անոր լուծման յապաղումը զուրկ ու եւ է անպատեհութենէ: Ու մարդ կը մղուի մտածել թէ արդեօք մեր այս խնդիրը յաւետեանապէս յետաձգուելո՞ւ դատապարտուած է՝ մինչեւ որ ցեղին վերջին շունչը ըսպառի, արեան յետին շիթը կաթէ լմննայ...

Et le combat cessa faute de combattants.

*
* *

Մինակ սա վերջին վեց եօթը տարիներուն մէջ, որոնք կը ներկայացնեն հայկական խնդրին էն սուր ժամանակամիջոցը, եղա՞ւ վայրկեան մը որ՝ եւրոպական դիւանագիտութիւնը ուրիշ զբաղումներէ ազատ՝ մեր յաւետեանական գործը կարգադրելու ձեռնարկէր հանգարտօրէն: Միջազգային կարեւոր դէպքեր իրարու յաջորդեցին անդուլ անդադար. չինեւճաբոնական պատերազմ, թուրքեյուսական պատերազմ, կրեոական խնդիր, սպանեւամերիկեան պատերազմ.

անդլեւպոէրեան պատերազմ: Եւ ուրիշ երկրորդական խնդիրներ միշտ վըրայ հասան հայկական հարցին վրայ ստուեր անելու համար:

Եւ մինչ Ռուսիա սկսած էր նշանակալից եւ յուսադրող խլրտումի մը մեղի ի նպատ, ազդուապէս յարուցանելով հայկական նահանգներուն բարեկարգումին խնդիրը, ահա չինական խառնակութիւնները կուգան ստիպել Ռուսիան որ իր ուշադրութիւնը կեդրոնացնէ իր կայսրութեան ծայրագոյն արեւելեան ու հարաւային սահմաններուն վրայ: Ուժգնութիւնը զոր ստացած է չինական խնդիրը այս վայրկեանիս, կը հարկադրէ եւրոպական գիւտնագիտութիւնը լարուած ուշադրութեամբ հետեւելու Երկնային կայսրութեան քայքայմանը, ինչ որ անշուշտ կարճ ժամանակուան մէջ լմբննալիք քան մը չէ:

Երբւրեք շիկերէն իր արիւնոտ երախը հիմակ դիւային ծիծաղի մը մէջ ճմով կած է, եւ զմայլումով կը դիտէ Չինաստանի մէջ գործերուն կնճոտ հանգամանք մը ստանալը, վասն զի անգամ մը եւս հայոց խնդիրը, զոր Ռուսիա ձեռք առնելու շարժում մը ըրած էր, կը ձգձգուի անորոշ պայմանաժամով մը:

Ու, իրերու այս ցաւալի դարձուածքին հանդէպ, ի՞նչպէս կարելի է գուհիի ու ծիծաղելի նախապաշարումներու չմղուել, եւ՝ այգանելի յոռետուսութեամբ մը՝ անհունօրէն մութ չտեսնել ազգերնուս ապագան, անյեղլի ճակատագրականութեան մը մագիլներուն մէջ վերջնապէս ճզմուած զգալով զայն:

Ե. Ս.



ԲԱՐԻՋԻ ՍԱՏՈՒՌԸ

Ժամանակէ մը ի վեր հայ հասարակութեան մէջ սա տիրական գաղափարը ընդհանրացած է թէ՛ ազգային արժանապատուութիւնը պարտինք բարձր բռնել օտարներու առջեւ, որոնք սկսած են չորս աչքով հետեւել մեր ամէն մէկ քայլին, մեր ամէն ձեռնարկներուն, յաջող կամ անյաջող: Ու այդ հետախուզող ուշադրութեան մէջ ես կարծած եմ տեսնել մասնաւոր փափաք մը մեր քննադատելի ու տըկար կողմերը երեւան հանելու, ո՞վ գիտէ, ապագայ ինչ հաշիւներու համար, որոնք, ամէն պարագայի մէջ, մեղի նպատաստոր ըլլալու հանգամանքներէն զուրկ կրնան գտնուիլ: Ու ինչպէս քանի մը հայ թերթեր շեշտեցին ժամանակին, ամէն հայ անհատի նուիրական պարտականութիւնը պէտք է ըլլայ իր բոլոր ուժով աշխատիլ ազգային վարկը բարձրացնելու, հաւատալով որ ազգային արժանապատուութեան այդ բարձրացումին մէջ է որ պիտի կրնայ գտնել իր վարկին բարձրացումը:

Երկար տարիներէ ի վեր Բարբէղի հայ գաղթականութիւնը այս տեսակէտով շատ քննադատելի կացութեան մը մէջ էր, չէնք շնորհք ազօթատեղի մը չունենալուն համար, ներկայանալի վիճակի մէջ: Իրաւ է թէ չէնք չէ որ մեր բարեպաշտիկ զգացումները պիտի արթնցնէ, բայց ամէն բան աշխարհի վրայ վայելչութեան սահմանին մէջ ընելու հարկը անխուսափելի դարձած է այլ եւս, ու մերք չէնք որ այս ընդհանուր օրէնքին մէջ

բացառութիւն պիտի կազմենք անշուշտ, այն ալ Բարիզի պէս կեդրոնի մը մէջ ուր հայութիւնը կարելի եղածին չափ փայլուն ցոյց տալու անհրաժեշտ հարկը կայ:

Հիմա միսիթարական է տեսնել որ հայկական մատուռի հոգաբարձութիւնը ձեռք ձեռքի առեած Եւրոպայի հայոց այցելու հովիւ Իւթիւճեան Սըրբազանի եւ Բարիզի հայոց հովիւ Տ. Վռամչապուհի հետ՝ իրականութեան ճամբու մէջ դրած է գեղեցիկ ու կուկիկ մատուռի մը շինութեան խնդիրը, որուն համար շնորհակալ ըլլալու ենք իրենց, որովհետեւ այդ գործունէութեան մէջ մենք կրնանք հաստատել ազգային արժանապատուութեան համար բարձրացում մը օտարին առջեւ:

Կը յուսամ որ քիչ ատենէն առիթը ունենամ այս խնդրին վրայ աւելի միսիթարական տեղեկութիւններ հարողել:

ԵՐՈՒԱՆԻ ՓԷՇԵՏԻՄԱԼՃԵԱՆ

Բարիկ

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Կ

Բիւզանդիոնէն կիմանանք թէ իզմիրի մէջ նոր հայ սաղանդ մը երեւան եկած է, Պ. Յակոբ փափագեան, որ գեռ հազիւ քսան քսան երկու տարեկան՝ արձանագործութեան մէջ սքանչելի յաջողութիւններ կը գանէ: Տաղանդաւոր արուեստագէտը քանի մը տարի առաջ իտալիա շրջուելով հոն կը կասարեղագործէ ճարտարապետութիւնն ու արձանագործութիւնը եւ կատանայ առաջին վկայական, զոր 17 տարիէ ի վեր ոչ ոք կրցած էր

ձեռք բերել: Հիմա Պ. փափագեան պիտի մասնակցի այն մրցման, որ բացուած է Ալեքսանտր Բ.ի մահարձանին համար, որուն մանրանկարը պիտի պատրաստուի կառով:

— Օրմանեան պատրիարքը շրջաբերականներ զրկելով գաւառներու առաջնորդութեանց, հաղորդեր է զինուորական յետնեալ առարքերուն բաշխումը. պատուիրած է նաեւ առաջնորդներուն որ՝ կառավարութեան կողմէ պատրաստուելիք նոր ցանկերուն կազմակերպութեանը հոգ տանին եւ զիւրութիւններ ընծայեն: Հա՞րկ է անգամ մը եւս զգացնել բոլոր այն խաբէութիւնը որ պահուած է Սուլթանին կողմէ եղած շնորհին եւ անոր դործադրութեան համար պատրիարքին կատարած ձեւակերպութիւններուն ներքեւ: Գաւառի սովահար ժողովրդին նիւթական վիճակին մէջ ու եւ է բարեքում չի կրնար բերել յիշեալ բաշխումը, եթէ նոյն իսկ ենթադրենք որ անիկա խղճմտութեամբ գործադրուի:

— Երբ մէկ կողմէ հայոց պատրիարքը իր աթոռի բարձունքէն թող կը փչէ ամբողջ ազգին երեսին, միւս կողմէ ցաւալի լուրեր կը հասնին գաւառներէն, ժողովրդեան ծայրայեղ թշուառութիւնը նկարագրող: Տուրքերը կը հաւաքուին ամէն ատենէ աւելի խստութեամբ:

— Պոլսոյ ամերիկեան դեսպանը դարձեալ սկսած է ճնշում բանեցնել Դրբան վրայ՝ ամերիկեան հպատակներու վնասներուն հատուցմանը համար:

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница «Ориенталъ» — Варна.

Յունիս 18, Կիրակի

| | | | |
|-------|-------------------------------------|---------------|---------|
| 10—11 | Պատմութիւն | տարր. դասընթ. | Բ. տարի |
| 11—12 | Պատմութիւն | բարձր. » | Բ. » |
| 2—3 | Ֆրանսերէն | միջին » | Բ. » |
| 3—4 | Ալճէպրա եւ երկրաչափութիւն | բարձր. » | Բ. » |
| 4—5 | Աշխարհագրութիւն | բարձր. » | Բ. » |

Յունիս 19, Երկուշաբթի

| | | | |
|-------|-------------------------------------|---------------|------|
| 9—10 | Բնական պատմութիւն | տարր. դասընթ. | Բ. » |
| 10—11 | Տնտեսագիտութիւն (աղջկանց) | միջին » | Բ. » |
| 11—12 | Պատմութիւն | տարր. » | Ա. » |

Յունիս 20, Երեքշաբթի

| | | | |
|-------|---|---------------|------|
| 9—10 | Թուաբանութիւն եւ երկրաչափութիւն | տարր. դասընթ. | Բ. » |
| 10—11 | Կրօնք եւ բարոյագիտութիւն | տարր. » | Ա. » |
| 11—12 | Հայերէն | միջին » | Բ. » |
| 2—3 | Բնագիտութիւն եւ բուսաբանութիւն | բարձր. » | Բ. » |
| 3—4 | Հայերէն | տարր. » | Ա. » |

Յունիս 21, Չորեքշաբթի

| | | | |
|-------|------------------------------------|---------------|------|
| 9—10 | Պուլկարերէն | տարր. դասընթ. | Բ. » |
| 10—11 | Կրօնք եւ բարոյագիտութիւն | միջին » | Բ. » |
| 11—12 | Կրօնք եւ բարոյագիտութիւն | տարր. » | Բ. » |
| 2—3 | Աշխարհագրութիւն | տարր. » | Ա. » |

Յունիս 22, Հինգշաբթի

| | | | |
|-------|------------------------------|---------------|------|
| 9—10 | Հայերէն | տարր. դասընթ. | Բ. » |
| 10—11 | Առեւտրական գիտելիք | բարձր. » | Բ. » |
| 11—12 | Աշխարհագրութիւն | տարր. » | Բ. » |

Յունիս 23, Ուրբաթ

| | | | |
|-------|-------------------------------------|---------------|------|
| 9—10 | Ֆրանսերէն | տարր. դասընթ. | Բ. » |
| 10—11 | Բնական պատմութիւն | տարր. » | Ա. » |
| 11—12 | Ձեռագործ եւ ձեւագիտութիւն | | |

Յունիս 24, Շաբաթ

| | | | |
|-------|--|----------------|------|
| 9—10 | Պուլկարերէն | բարձր. դասընթ. | Բ. » |
| 10—11 | Պուլկարերէն | միջին » | Բ. » |
| 11—12 | Բնական պատմութիւն | միջին » | Բ. » |
| 2—3 | Անգլ. եւ գերմաներէն (հետեւողներու համար) | | |
| 3—4 | Թուաբանութիւն եւ երկրաչափութիւն | տարր. » | Ա. » |
| 4—6 | Մանկապարտէզի քննութիւնք | | |

Յունիս 25, Կիրակի

| | | | |
|-------|---|---------------|------|
| 10—11 | Աշխարհագրութիւն եւ պատմութիւն | միջին դասընթ. | Բ. » |
| 11—12 | Թուաբանութիւն եւ երկրաչափութիւն | միջին « | Բ. » |
| 2—3 | Վաղաք. մատենութիւն եւ պատմ. փիլիսոփ. | բարձր. » | Բ. » |
| 3—4 | Հայերէն լեզու եւ պատմ. մատենագրութեան | բարձր. » | Բ. » |
| 4—5 | Ֆրանսերէն լեզու եւ պատմ. մատենագրութիւն | բարձր. » | Բ. » |

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Երկրորդ քաղ, Շիքեճևսա փողոց, (Մագալլը յեշմեի (ից)



Կը տպագրուին հայերէն, պոլիարերէն, դաղղիերէն, յունարէն, աաճկերէն և այլ լեզուներով այցեառմս, հասցէառմս, հարսանեկան հրուիրագիր, ազգարարութիւն, նամակագրութիւն, պահարան, մահազգ, վաճառականական ամէն տեսակ դործեր, գիրք, քաղիք, եւ այլն:

Գունաւոր և ոսկեզօծ զարդագործերու համար ամէն լեզուէ ճոխ տառեր և մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵԾ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԳԻՆԵՐԸ ՅՈՅԺ ԳԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ

Ուրիւք քաղաքներէ եկած յանձնարարութիւններ նշանակաւ եւ փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).

